Հաշվետվություն

2025 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին կատարված աշխատանքների

ԿԳՄՍ նախարարության նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչությունում որպես փորձագետ հաշվետու ժամանակահատվածում՝

1. Ուսումնասիրել եմ միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում հուշարձանների տարածքների և պահպանական գոտիների սահմաններում հողամասերի նպատակային նշանակությանն առնչվող փոփոխությունների հարցերը և մասնակցել դրանց վերաբերյալ կարծիքների տրամադրման աշխատանքներին:

2. Ուսումնասիրել և կարծիք եմ ներկայացրել նախարարություն ներկայացված ՀՀ կառավարության որոշման նախագծերի վերաբերյալ.

3. Կազմել և հաստատմանն եմ ներկայացրել «Հայաստանի Հանրապետության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (711 նորահայտ հուշարձան ՀՀ կառավարության որոշումներով հաստատած ՀՀ մարզերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում ընդգրկում):

ՀՀ կառավարության 2025 թ. օգոստոսի 14-ի N 1151-Ն որոշմամբ որոշման նախագիծը հաստատվել է, որի արդյունքում պետական ցուցակում ընդգրկված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների թվաքանակը աճել և կազմում է 24935 հուշարձան: Որոշման ընդունմամբ պետական ցուցակներում կատարվել է հուշարձանների անվանումների, թվագրման և հասցեների ճշտումներ:

4. Կազմել եմ «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարանի և «Լոռի Բերդ» քաղաքատեղի» պատմամշակութային արգելոցի Հայաստանի Հանրապետության սեփականությունը համարվող տարածքները նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների ու պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին օգտագործման հանձնելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծերը («Անշարժ գույք ամրացնելու և անհատույց օգտագործման իրավունքով տարածք ամրացնելու մասին»), որոնք հաստատման նպատակով ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ սահմանված կարգով հաստատման գործընթացն իրականացնելու համար: Որոշման նախագծերի ընդունումը հնարավորություն կտա արդյունավետ կառավարել արգելոցների տարածքները՝ ապահովելով գիտական

ուսումնասիրության ու պահպանության, ենթակառուցվածքների ստեղծման, մշակութային ծրագրերի իրականացման, լուսավորության ու տարածքի բարեկարգ վիճակն ապահովելու և զբոսաշրջիկների պատշաճ սպասարկման հարցերը:

5. Համակարգել եմ հուշարձանների սեփականատերերից հուշարձանների պահպանական պարտավորագրերի աշխատանքները: Ապահովել եմ խորհրդատվություն պահպանական պարտավորագրերի ներկայացման գործընթացների վերաբերյալ:

Անցած ժամանակահատվածում սեփականատերերի կողմից ներկայացվել են 570 հուշարձանի պահպանական պարտավորագիր:

6. Մասնակցել եմ Երևան քաղաքի Նալբանդյան 28 շենքը («Հանրապետության հրապարակ, փոստի և կապի նախարարություն») վարձակալությամբ օգտագործման հանձնելու մրցութային հանձնաժողովի աշխատանքներին և համակարգել հուշարձանի անվտանգ պահպանությանն առնչվող հարցերի մրցույթային ծրագրերում ներառման օրենսդրական դրույթների ապահովման հարցը:

7. Հետևել եմ նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին 2025 թ. դրամաշնորհի տրամադրման պայմանագրով նախատեսված կատարողականի կատարման ընթացքին և ոչ ֆինանսական հաշվետվություններով նախատեսված եռամսյակային աշխատանքներին վերաբերող տեղեկատվության ներկայացման գործընթացին:

8. Մանակացել եմ ՀՀ Կադաստրի կոմիտեի Աշխարհագրական տեղանունների հանձնաժողովի աշխատանքներին և ներկայացրել համապատասխան առաջարկություններ.

9. Մասնակցել եմ հուշարձանների պահպանական գոտիների նախագծերի համաձայնեցման և հաստատման գործընթացներին:

10. Մասնակցել եմ նոր հայտնաբերված օբյեկտներին նորահայտ հուշարձանների կարգավիճակ տալու նպատակով նախատեսված փորձագիտական հանձնաժողովի աշխատանքներին:

11. Կատարել եմ հուշարձանների պետական հաշվառման, պահպանության, օգտագործման և տարածքների գույքային ճշտմանն առնչվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության ղեկավարության կողմից տրված այլ հանձնարարականներ:

Պատմության և մշակույթի հուշարձանների
պահպանության վարչության փորձագետ՝ **Սուրեն Շաքարյան**